

## Գուռը

Իրիկուան մէջ, գիւղին քով,  
Կը մըրմընջէ գուռն ուռիին տակ շըքէդ:  
Զայն կը լեցնէ աղբիւրն երգովը բիւրեղ,  
Աստղը՝ բիւրեղ արցունքով:

Խորհուրդին մէջ ըստուերին  
Կընունքի ջինջ աւազան մէ կարծես ան՝  
Ուր քաղցրօրէն կը մըկըրտուի լուսընկան՝  
Տըղու մը պէս նորածին:

Յոգնաբեկ խումբն եզներուն  
Հոն կը դիմէ արահետէն ճախճախուտ՝  
Ուրկէ կհոսի, ճապաղելով, ջուրն անփոյթ՝  
Մարգերուն տակ՝ պըսպըղուն:

Կողեր կողի դէմ ահա՛,  
Եւ գաւակներ գաւակներու կընդհարին.  
Յանկարծ մոլուցք մեղջիւրներու ահագին  
Կը տատանի գուռին վրայ:

Միահաղոյն կերկարեն  
Վիզերն իրենց, եւ ռունգերնին յարդամած  
Յըստակ ջուրին աղամանդին մէջ մըխած՝  
Յաւերժօրէ՛ն կը խըմեն:

Կըմպեն ալիքն անապակ,  
Լոյս ծիրումը պարեխներուն սառնակերտ.  
Ու չէ՛ն խըրտչիր լուսընկայէն՝ որ մերթ մերթ  
Կըլողայ իրենց բերնին տակ:

Կը վերցընեն երբեմն, յա՛գ,  
Հըզօր գլուխնին, ու կը նային սարերո՛ւն...  
Կը սորսորայ իրենց դունչէն՝ քարերուն՝  
Ջուրը, երակ առ երակ:

Անդէրդն, հոն, մահակին  
վըրայ կըռթնած՝ կը սուլէ երգն հեշտօրօր,  
Մինչեւ վէտ վէտ ցամքի հեղուկը բոլոր,

Մընայ մամուն՝ յատակին:

Կերթան յետոյ, օրօրուն,  
ումին խաղաղ գաւիթին մէջ պատկելու.  
Կը կարկաջէ գիւղամէջէն, զերթ առու,  
Զանգակն իրենց վիզերուն:

Ու երբ դարձեալ գան առտուն  
Պիտի գըտնեն հըսկումին տակ ուռիին  
ուռը նորէ՛ն լեցուած երգովն աղբիւրին,  
Եւ արցունքովն՝ աստղերուն:

**Դանիել Վարուժան**